են հինգերորդ դարում, իսկ Կորիւն, առաջինները մէկը այսպէս անուանուած աւագ թարգմանիչներից, պատմում է արդէն իբրեւ ականատես։ Լինելով ոչ-ժամանակակից պատմիչներ՝ Ագաթանգեղոս եւ Բուզանդ օգտուել են նաեւ, այդ ակներեւ է, ժողովրդական աւանդութիւններից՝ հիւսուած իրենց նկարագրած պատմական դէպքերի ու դէմքերի շուրջը։ Այդ աւանդութիւնները դեռ կենդանի էին հինգերորդ դարում։ Եւ եթէ այս կամ այն կէտում առարկայական — պատմական ճշմարտութեան չեն համապատասխանում, դրա փոխարէն՝ հարազատ արձագանգներ են ժողովուրդի հոգեկան ապրումների, նորա ենթակայական աշխարհի։ Այդ տեսակէտից եւս պակաս գնահատելի չեն Ագաթանգեղոս եւ Փաւստոս։

Ագաթանգեղոս ամենագլխաւոր աղբիւրն է հայ դիցաբանութեան։ Նախաքրիստոնէական հայ կրօնի մասին մեր ունեցած ծանօթութիւնները գլխաւորաբար նրան ենք պարտական։ Եւ որովհետեւ այդ տեսակէտից բաւականաչափ օգտագործուած է Ագաթանգեղոսի գրուածքը, քանի որ մէկից աւելի արժէքաւոր ուսումնասիրութիւններ կան հրապարակի վրայ, ուր եւ հետաքրքիր ընթերցողը կարող է գտնել անհրաժեշտ նիւթերը հայ դիցաբանութեան մասին, ուստի եւ այստեղ կը գոհանանք անհրաժեշտով միայն, ներկայացնելու համար Ագաթանգեղոսի գերքը իբրեւ աղբիւր Հայ Ազգագրութեան։

Նոյն այդ տեսակէտից՝ զարմանալիօրէն պակաս ուշադրութեան է առնուած մեզնում Ագաթանգեղոսի յաջորդը, Փաւստոս Բուզանդ։ Ներկայ տողերի մէջ սակայն, դարձեալ ստիպուած ենք գոհանալու ընդհանուր գծերով միայն՝ Փաւստոս Բուզանդի, որպէս Հայ Ազգագրութեան հնագոյն աղբիւրներից մէկի մասին։

* * *

Կորիւնի փոքրիկ գրուածքի մէջ մենք շատ քիչ ազգագրական նիւթ ենք գտնում։ Այդ տեսակէտից աւելի կամ պակաս կարեւորութիւն ստանում է այն հատուածը միայն, որ վերաբերում է Գողթան գաւառին եւ Մարաց շրջանին։ «Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի թագաւորէն՝ սկիզբն առնելոյ զխուժադուժ կողմանս Մարաց, որ ոչ միայն վասն դիւական սատանայակիր բարուցն ճիւաղութեան, այլ եւ վասն խեցբեկագոյն եւ խոշորագոյն լեզուին՝ դժուարամատոյցք էին» (Վենետիկ, 1833, էջ 12)*)։

Խօսքը վերաբերում է ուրեմն Մեսրոպ Մաշտոցի քարոզչական գործունէութեան՝ «Մարաց կողմերում», որին նա ձեռնարկեց «թագաւորի (Վռամշապուհի) հրամանով»։ Իմանում ենք նաեւ, որ այդ երկրամասի բնակչութիւնը «խուժադուժ» ժողովուրդի համբաւ է ունեցել ժամանակակից հայոց աչքում, ծանօթ՝ իր «դիւական և սատանայակիր, ճիւաղական բարքով», նիստ ու կացով եւ հասկացողութիւններով։ Վերջապէս, որ այդ ժողովուրդի լեզուն եղել է խեցբեկագոյն, անտաշ եւ կոպիտ, դժուարահասկանալի։

Թէեւ քրիստոնէութիւնը արդէն մէկ եւ կէս դար առաջ պաշտօնական կրօն էր հռչակուած Հայաստանում, բայց եւ այնպէս՝ բաւականաչափ արմատացած չէր Հայաստանում։ Հեթանոսական կրօնը եւ հին հասկացողութիւններն ու կենցաղը տակաւին խոր արմատներ ունէին ոչ միայն ժողովրդական խաւերի, այլ եւ իշխող դասակարգերի մէջ, որոնք կրողը եւ պաշտպանն էին նոր կրօնի։ Փաւստոս Բուզանդ այդ մասին շատ որոշ տեղեկութիւններ է պահել։ Հին կենցաղը եւ կրօնը ուժեղ էին մանաւանդ Հայաստանի մի քանի գաւառներում, դրանց թւում նաեւ՝ «Մարաց կողմերում»։

Մեսրոպ Մաշտոց մասնաւոր առաքելութիւն է ստանձնում՝ արմատախիլ անելու հեթանոսութեան մնացորդները այդ շրջաններում։ Այդտեղ տարածուած էր նաեւ, Կորիւնի վկայութեան համաձայն, «դժպատեհ եւ կամակոր Բարբարիանու աղանդն»։ Երբ Մաշտոց «ոչինչ դատած էր հնարս յուղղութիւն ածելոյ», այսինքն՝ երբ ժողովուրդին խօսքով համոզել ու դարձի բերել չի կարողանում, «ի գործ արկանէր զթշուառացուցիչ գաւազանն,

---

*) Այս վկայութիւնները առաջ ենք բերում անփոփոխ, դրաբար լեզուով, ուր ենթադրում ենք որ հասկանալի են միջին ընթերցողին։ Այլապէս թարգմանում ենք ամբողջովին։